ՄՈՍԿՎԱՅԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 7-ին Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցում, հանդիսապետությամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի համար աղոթք բարձրացնելու էին եկել մեծաթիվ հայեր, ՌԴ-ում ՀՀ դեսպանատան, բազմաթիվ հասարակական և քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հայ հավատացյալներ:

Ժողովրդի բազմությունը, հանդիսապետությամբ Սրբազան Հոր, Առաջնորդարանից շարժվեց դեպի եկեղեցու շրջափակ, ուր ի հիշատակ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի կանգնեցված Խաչքարի շուրջ ներկաները Ծաղկեպսակներ դրեցին, ապա թափորը շարժվեց դեպի Ս. Հարություն եկեղեցի, որտեղ կատարվեց Հոգեհանգստյան արարողություն: Հավարտ Հոգեհանգստյան արարողության Սրբազան Հայրն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին՝ հորդորելով ներկա հայորդիներին առավել ջանադրությամբ և եռանդով լծվել հայրենաշինության սուրբ ու նվիրական գործին: Հորդորեց ամենքին՝ իրենց մասնակցությունը բերել շենացող ու պայծառացող մեր Հայրենիքին՝ իբրև հարազատ զավակներ մեր ժողովրդի և Եկեղեցու, հաստատելով, որ «Դատմությունը հաճախ է դաժան եղել մեր ազգի հանդեպ, ցավը մշտապես անբաժան է եղել մեր ժողովրդից, բայց մենք, իբրև ժառանգներ մեր նախնիների, նույն ոգով և հավատով տոկացել ենք մեր ազգային հավաքականության համար ժամանակի դժվարին քառուղիներում: Այդ տոկունության երաշխիքը մեզ համար եղել է միասնականությունը, մեր նախնյաց օրինակով՝ հավատի ու սիրո ճանապարհներով քայլելը: Եվ այսօր իբրև ժողովուրդ մենք հոգու պարտք ունենք անմեղ զոհերի առաջ՝ իրականություն դարձնելու նրանց այն երազները, որոնք նրանք չհասցրեցին իրագործել»:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ